ԻՐԱՆԱՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԹԵՄԵՐԻ «ՄՈՌԱՑՎԱԾ ՍՐԲԵՐԸ» (ԱՎԱԳ ՍԱԼՄԱՍՏԵՑԻ. ԻՍԱՀԱԿ ԹԱՎՐԻԶԵՑԻ. ՄԻՐԱՔ ԹԱՎՐԻԶԵՑԻ. ԳՐԻԳՈՐ ԱՐՓԱՅԵՑԻ)

Արման Անդրիկյան

Ավանդաբար Հայ Առաքելական եկեղեցին ժուժկալ կամ, ավելի ճիշտ, զգուշավոր է սրբադասության հարցում, որի հոգևոր և պատմական արմատները խորն են: Դարերի ընթացքում Հայոց եկեղեցու բազմաթիվ հավատացյալ զավակներ սկսած թագավորական ու իշխանական զարմի ներկայացուցիչներից, հոգևորականությունից և ավարտած հասարակ ժողովրդով, գնացել են իմացյալ ինքնազոհության հանուն քրիստոնեական հավատի: Սրանց շարքում իրենց ուրույն տեղն ունեն սուրբ նահատակները կամ մարտիրոսները, որոնց մասին պատումները հայկական սրբախոսական գրականության մի ստվար հատվածն են և ձևավորվել են դեռևս V դ. և իրենց զարգացումն են ապրել հետագա ժամանակաշրջաններում: XI-XV դդ. կազմվում են Հայսմավուրք մատյանների առաջին խմբագրությունները, որոնք ժամանակի ընթացքում թարմացվում էին՝ զետեղելով դրանցում այս կամ այն սուրբ նահատակի կամ «նոր վկայի» մասին հիշատակությունները:

Խոսելով Հայ եկեղեցու բարեկարգման և նոր սրբերի հավելման խնդրի մասին Մեսրոպ արք. Աշճյանը իրավացիորեն փաստում է, որ «Պետք է աւելցնել կարգ մը հայ սուրբեր, որոնց տօնը այս կամ այն պատճառաւ խափանուած է կամ երբեք չէ տօնուած» և օրինակի համար թվարկում է մի շարք մոռացված անուններ, որոնց թվում են Իրանահայ թեմերի սուրբ նահատակներ Ավագ Սալմաստեցին, Իսահակ Թավրիզեցին, Միրաք Թավրիզեցին և Գրիգոր Արփայեցին[1]:

Ստորև փորձենք ներկայացնել սուրբ նահատակներին ժամանակագրական կարգով:

---

[1] **Մեսրոպ արք. Աշճեան**, Հայոց եկեղեցու սուրբերն ու սրբոց տօները, Հայոց սրբերը և սրբավայրերը. Ակունքները, տիպերը, պաշտամունքը, , «Հայաստան» հրատ., Երևան, 2001, էջ 15-16:

Ավագ Սալմաստեցի

XIV դ. երկրորդ կեսը իրանահայության համար դժնդակ տարիներ էին: Մոնղոլական տերության փլուզման պայմաններում զանազան վաչկատուն թյուրքալեզու ցեղերի դաժան ասպատակությունները, միջցեղային կռիվները, մահմեդական իշխանությունների հարկային քաղաքականությունը, կրոնական հալածանքները, միարարների հրահրած դավանաբանական խժդժությունները ծանր հարված հասցերեցին երբեմնի ծաղկուն և հայահոծ բնակչությամբ Սալմաստ քաղաքին: Հալածանքներից անմասն չմնացին Հայ առաքելական եկեղեցու իրանահայ թեմերը և դրանց հոգևոր հոտը: Հավատուրացության և դավանափոխության հարցերն իրենց ողջ սրությամբ դրված էին Սալմաստի հայ բնակչության առջև, որոնցից շատերը դավանափոխ եղան կամ դիմեցին առերևույթ հավատուրացության՝ մնալով ծպտյալ քրիստոնյաներ: Նշված տարիներին բավական մեծ թվով հայ վաճառականներ ու արհեստավորներ հեռացան Թավրիզից, Խոյից ու Սալմաստից հաստատվելով տարբեր երկրներում, ինչպես նաև բուն Հայաստանի տարբեր պատմագավառներում:

Ավագ Սալմաստեցու նահատակության մասին վկայությունները պահպանվել են XV-XVII դդ. թվագրվող մի շարք «Հայսմավուրք» մատյաններում, որոնց քննական-համեմատական տեքստը հրապարակվել է մեծանուն հայագետներ Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի աշխատասիրությամբ լույս տեսած «Հայոց նոր վկաները» գրքում[1]: Բացի հիշյալ մատյաններից մինչ այժմ չեն հայտնաբերվել այլ վկայություններ, որոնք թույլ կտային առավել ամբողջական ներկայացնել սուրբ մարտիրոս Ավագի կերպարը: Սակայն զանազան գրչության կենտրոններում շուրջ երեք դարի ընթացքում արտագրված «Հայսմավուրք»-ների քանակը, որոնցում հիշատակվում է Ավագ Սալմաստեցին, արձանագրում է այն փաստը, որ վերը նշված դարերում այս նահատակության պատմությունը լայն տարածում ուներ ոչ միայն բուն Հայաստանում, այլև հայկական տարբեր գաղթօջախներում: Արդ ո՞վ էր Ավագ Սալմաստեցին: Սրբի վկայաբանությունից իմանում ենք, որ նա հայահոծ բնակչություն ունեցող վաճառաշահ Սալմաստ քաղաքից էր, որտեղ անցել էին նրա մանկու-

[1] Հայոց նոր վկաները (1155-1843), գիտական հրատարակութիւն, աշխատութեամբ Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 152-165:

թյան և պատանեկության տարիները: Վկայագրի հավաստմամբ Ավագն իր հայրենի քաղաքում քսակակարի արհեստ էր սովորում մի պարսիկ վարպետի մոտ ում տանն էլ ապրում էր[1]: Մահմեդական արհեստավորների շրջանում սովորաբար ընդունված չէր քրիստոնյա աշակերտներ պահելը և վարպետության աստիճանի հասցնելը, բայց ինչ որ պատճառով Ավագի պարագայում այս արգելանքը շրջանցվել էր: Վարքագրի քողարկված ակնարկից և հետագա իրադարձությունների ընթացքից երևում է, որ կամ Ավագը հավատափոխ է եղել, կամ էլ նրա վարպետն իր հավատակիցներին ու արհեստակիցներին Ավագին ներկայացրել է որպես մահմեդական. «…ի տղայութեան ժամանակն ընդ նմին (**իմա. պարսիկ վարպետի մոտ-Ա.Ա**) կեցեալ վասն օգտութեան արուեստին, բայց ի հաւատոցն ոչ ուրացեալ, այլ ոմանց այսպէս կարծիս առեալ, թե տաճկացեալ էր»[2]: Ավագի վարքագրի տեղեկությունից երևում է, որ ինչ-ինչ պատճառներով նա լքել է հայրենի Սալմաստը և տեղափոխվել Բաղեշ՝ շարունակելով պարապել իր արհեստով ու ապրել որպես ճշմարիտ քրիստոնյա: Ամենայն հավանականությամբ Ավագը չի ցանկացել հավատուրացի կարգավիճակով ապրել Սալմաստում՝ յուրայինների աչքում օտարի և օտարների մեջ յուրայինի խարանով և հեռացել է Սալմաստից բավական հեռու գտնվող Բաղեշ քաղաք: Ավագի Սալմաստից հեռանալուց երեք տասնամյակ հետո Բաղեշում հայտնվում է մի պարսիկ, ով ճանաչում է նրան և հարցնում. «Դու երբեմն ի Սալմաստ տաճիկ էիր և աստ քրիտոնեա՞յ եղեր»:[3] Ավագի պատասխանը կտրուկ էր, հստակ՝ վայել աներեր հավատով քրիստոնյային. «Ես քրիստոնեայ էի և եմ և եղէց ծառայ Քրիստոսի Աստուծոյն իմոյ օրհնելոյն ի բարձունս»[4]: Պատասխանի կառուցվածքը և բովանդակությունը հայ սրբախոսական ժանրի և հայսմավուրքային գրականության մեջ տարածված հստակ կաղապարների սահմաններում է: Ավագ Սալմաստեցին, ինչպես իր ժամանակի մյուս մարտիրոսները, քաջ գիտացում էր, որ իր պատասխանը մահվան դատավճռի էր հավասար: Ավագի իբր մահմեդականությունն ուրանալու և քրիստոնյա դառնալու լուրը նրա համերկրացի պարսիկն անմիջապես

---

[1] Հայոց նոր վկաները, էջ 157:

[2] Նույն տեղում:

[3] Հայոց նոր վկաները, էջ 158:

[4] Նույն տեղում:

ազդարարում է Բաղեշում, որից հետո մոլեռանդ ամբոխը նրան տանում է քաղաքի ամիրա Ամիրշարաֆի մոտ: Երբ ամիրան համոզվում է, որ Ավագը հաստատուն է առ Քրիստոս իր հավատում, ցանկանում է ազատ արձակել նրան, սակայն վախենալով մոլեռանդ ու մութ ամբոխի զայրույթից հրամայում է քաղաքի ղատիի[1] մոտ դատաստանի: Ավագ սալմաստեցու վարքագիրը վկայում է, որ մոլեռանդ ամբոխը շրջապատել էր ղատիի նստավայրն, ինչպես վայրի գազաններ, կատաղած շներ, որոնք ինքնակամ ու հաստատակամ մարտիրոսության գնացողի արյան ծարավ էին: Հայկական մարտիրոսագրությանը բնորոշ և գեղարվեստորեն շարադրված մի վկայություն է Ավագի վրա աստվածային շնորհների իջնումը. «Եւ նա էր ի մէջ նոցա լի հոգւովն սրբով, եկեալ շնորհացն աստուածային ի վերա նորա, և լուսափայլեր պատկեր նորա իբրև զիրեշտակի: Զօրութիւնն Քրիստոսի բնակեալ էր ի նմա և նովաւ պայխառանայր տեսիլ նորա ի մէջ շանցն սպանողաց»[2]: Ավագի նահատակության հայսմավուրքային պատումի հեղինակը համոզված էր, որ նա քաջագիտակ էր սուրբգրային ավանդույթներին և պատրաստ էր հետևել Դավթի Սաղմոսի.» Պատուական է առաջին Տեառն մահ սրբոց իւրոց /Տիրոջ աչքում հարգելի է մահն իր սրբերի» պատգամին[3]: Իր վարքով և անհողդողդ կամքով Ավագն արժանի էր Աստծո որդու վկան լինել համոզված է վարքագիրը: Որպես և հատուկ է ժամանակի մարտիրոսագրության ավանդույթին, Տիրոջ սուրբ վկա Ավագը նահատակությունից առաջ ևս մեկ անգամ խոստովանեց և չուրացավ իր հավատքը ասելով.«Ես քրիստոնեայ եմ և Քրիստոսի Աստուծոյն իմոյ ծառայ»[4]: Սրանից հետո պետք է հետևեր նորահայտ սրբի դաժան սպանության նկարագրությունը, որն իր սյուժետային գծով հար և նման է հատկապես իր ժամանակին բնորոշ մարտիրոսագրական պատումներին: Կատաղած արյունռուշտ գայլերի ոհմակով շրջապատված գառան նման, Ավագը առանց վհատվելու և պայծառ դեմքով գնում էր խոստովանությամբ առ աստված ճշմարիտ, ինչը բազմապատկել էր մոլագար ամբոխի զայրույթը: Նույնիսկ ղատիի ատյան չեն հասցնում սուրբ մարտիրոսին և առանց դատ ու դատաստա-

---

[1] Ղատի կամ ղադի՝ մահմեդական դատավոր:

[2] Հայոց նոր վկաները, էջ 159:

[3] Աստուածաշունչ, Դավթի Սաղմոսների գիրքը, ՃԺԵ/115/. ԺԵ /15/:

[4] Հայոց նոր վկաները, էջ 162:

նի փայտերով, սրերով ու քարերով սպանում են նրան: Հայսմավուքային պատումի հեղինակը հստակ նշում է Ավագ Սալմաստեցու նահատակության ժամանակը՝ Հայոց Մեծ թվականության ՊԼԹ /839/ թվի մեհեկան ամսի ԺԵ /15/ չորեքշաբթի քառասնորդաց պահոց երկրորդ շաբաթվա ընթացքում, ինչը համապատասխանում է Գրիգորյան տոմարով 1390 թ. մարտի 8-ին:

Սալմաստեցի քսակակար Ավագի մարտիրոսությունը վառ ապացույցն է այն իրողության, որ XIV-XV դդ. հայկական մարտիրոսագրության մեջ իշխանների, զորականների, ազնվական կանանց և այլոց փոխարեն հանդես են գալիս ժողովրդական լայն զանգվածների ներկայացուցիչներ՝ հասարակ ռամիկներ, արհեստավորներ և առևտրականներ[1]:

Իսահակ Թավրիզեցի

Իսահակ կամ Հովսեփ (Յուսուփ) Թավրիզեցու[2] նահատակության մասին վկայությունները պահպանվել են մի շարք Հայսմավուրքներում և Թովմա Մեծոփեցի պատմիչի «Պատմութիւն Լանկ Թամուրայ և յաջորդաց իւրոց» մատյանում: Վերջինը, ինչպես իրավացիորեն գտնում են «Հայոց նոր վկաների»-ի աշխատասիրողները, թերի է, քանի որ Իսահակի մասին տեղեկությունները հասցվում են մինչև նրա Ախալցխա գնալը և բացակայում են նրա նահատակության նկարագրությունը, վայրը և ժամանակը: Իսահակի մասին հայսմավուրքային պատումների համահավաքը և բաղդադական-քննական տեքստը հրատարակվել են «Հայոց նոր վկաները» աշխատության մեջ: Մինչ այդ, Իսահակին Յուսուփ անվամբ հիշատակում է նաև Մ. Չամչյանը, որի ներկայացրած պատումը Թովմա Մեծոփեցու վկայության վերաշարադրանքն է և մի Հայսմավուրքից բերված տեղեկությունը նրա նահատակության վայրի ու ժամանակի մասին[3]: Իսահակի մարտիրոսության մասին իր տեղին խոսում է նաև Մ. արք. Օրմանյանը[4]:

Իսահակ Թավրիզեցու մարտիրոսությունը տրամագծորեն տարբեր-

---

[1] Армянские жития и мученичества V-XVII вв., Перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К. С. Тер-Давтян, изд. «Наири», Ер., 1994, с. 18.

[2] Հիշատակվում է նաև Իսահակ կամ Հովսեփ պարսիկ Թավրիժեցի անվամբ, որն օգտագործվել է «Հայոց նոր վկաներ»-ում Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի կողմից:

[3] **Մ. Չամչյան**, Հայոց պատմություն, հ. Գ., ԵՊՀ հրատ., Երևան, 1984, էջ 438-441:

[4] **Մ. արք. Օրմանյան**, Ազգապատում, հ. Բ, 1407: Ս. Էջմիածին, 2001թ:

վում է Ավագ Սալմաստեցուց: Եթե Ավագի պարագայում մենք գործ ունենք ծնունդով հայ և հավատքով քրիստոնյայի հետ, ով հնարավոր է, որ ստիպված է եղել հեռանալ իր ծննդավայրից՝ հավատարիմ մնալով իր կրոնին, ապա Յուսուփ-Իսահակի դեպքում խոսքը գնում է մի մահմեդականի մասին, ով հրաշափառ տեսիլքի շնորհիվ մկրտություն է ստանում և դառնում քրիստոնեության ջերմեռանդ քարոզիչ: Հայսմավուրքային վկայության մեջ նշվում է, որ Յուսուփը «ազգաւ պարսիկ էր և հաւատովն տաճիկ /**իմա. մահմեդական-Ա.Ա.**/» ապրում էր Թավրիզ մայրաքաղաքում: Վաղ հասակում սա խիստ անառակ էր ու լիրբ. «… բոլորովին կամարար սատանայի և դիւաց նորա»[1]: Թովմա պատմիչն ավելացնում է, որ այս Յուսուփը խիստ հայոհոյիչ ու ատող էր Քրիստոսի անվան, ով վերցնում էր սատկած շների պիղծ ոսկորները, հետապնդում քրիստոնյա երեխաներին՝ դրանք գցելով այն կարասը, որտեղից ջուր էին խմում Մեծ Գրիգորի[2] աշակերտ Ստեփաննոս վարդապետը և թավրիզեցի քրիստոնյաները[3]:

Յուսուփի տեսիլքի և դարձի նկարագրությունը բավական համառոտ է ներկայացված հայսմավուքային պատումում: Երազում պարսիկ երիտասարդին երևում է Քրիստոսն ինչպես երևաց Պողոս առաքյալին Դամասկոս մտնելիս, որից հետո Յուսուփը երեք օր մեռյալ քնով է անցնում: Արթնանալուց հետո իր տեսիլքի մասին պատմում է հորն[4] ու եղբայրներին՝ հայտարարելով որ. «Ճշմարիտ Քրիստոս Աստուած է և Որդի աստուծոյ»[5]: Հայոց նոր՝ օտարազգի, վկայի դարձի պատմությունը Թովմա Մեծոփեցու մատյանում առավել ընդարձակ է և հարուստ մանրամասներով: Հայ վարքագրական ժառանգությանը քաջատեղյակ Թովման, Յուսուփի դարձն առավել հիմնավորված և փաստարկված ներկայացնելու համար նրա տեսիլքի նկարագրությունը հարստացնում է կերպարներով, գործողություններով և պատկերներով: Ի տարբերություն նախորդ վկայության, Թովմայի մոտ Քրիստոսը Յուսուփին այցելում է ոչ միայնակ, այլ իր 12 առաքյալներով և հրամայում բռնել երիտասարդին, սպանել նրան,

---

[1] Հայոց նոր վկաները, էջ 208:

[2] Մեծոփեցին նկատի ունի Սուրբ Գրիգոր Տաթևացուն:

[3] **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրական երկեր, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մադոյանի, ԵՊՀ հրատ., Երևան, 2003, էջ 35:

[4] Մեծոփեցու վկայությամբ՝ մորն ու եղբայրներին:

[5] Հայոց նոր վկաները, էջ 209:

որպեսզի իր մահից հետո կարողանա այցելել այն տեղը, որտեղ իր ցեղակիցներն են ու իր առաջնորդը:[1] Հաջորդիվ բերվող նկարագրությունը այլադավանի կամ անհավատի դարձի գալու մասին պատումի դասական մոդել է, երբ դարձի եկողի նախկին դժոխային կարգավիճակին պետք է հակադրվեր նորի դրախտային բնույթը: Թովման գեղարվեստորեն նկարագրում է դժոխքում Յուսուփի հավատակիցների և դրանց առաջնորդի գեհենական հրի մեջ այրվելը, շղթայված շան նման կաղկանձյունը և այլն: Սրբագրական ժանրի կանոնի համաձայն Տիրոջ հրեշտակը դարձի բերվող մոլորյալին պետք ուղեկցեր դրախտ: Ցույց տալով Յուսուփին երկնային արքայության մեջ հայտնված Քրիստոսի հավատացյալներին, նրա անդրանիկ վկաներին և Աստվածամորը, Տիրոջ հրեշտակը հանդիմանում է նրան. «…տեսնու՞մ ես հայոց Լուսավորչին՝ պսակված աստվածային փառքով, դու ինչու՞ ես հայոց ազգին անարգում հայհոյելով: Հավատա խաչ բարձրացած Քրիստոսին ու գնա, մկրտվիր հանուն ամենասուրբ Երրորդության, որ չգնաս այն տեղը, որ տեսար այլ փառավորության այս տեղը, որի մեջ ես այժմ»[2]: Ակնհայտ է, որ Մեծոփեցին, որպես Հայ առաքելական եկեղեցու և իր ազգի նվիրյալ զավակ, Յուսուփի տեսիլքը հարստացրել է Սբ.Գրիգոր Լուսավորչի և հայոց ազգի կերպարներով՝ հրեշտակի բերանով հանդիմանելով ոչ միայն դարձի եկող պարսիկ երիտասարդին, այլև նրա ցեղակից մոլեռանդ խավարամիտներին:

Հայսմավուքային պատումի հեղինակը չի հիշատակում Յուսուփին մկրտած հայ քահանայի անունը, ով նրան հայոց գրերը և Աստծո շնորհներն էր ուսուցանել: Թովմա Մեծոփեցին հստակ հիշատակում է Յուսուփին՝ որպես Իսահակ մկրտած, Թավրիզում իր հոգևոր ծառայությունը իրականացնող վարդապետին՝ Լալուկ մականունով Տեր Ստեփաննոսին: Առանց վարանելու կարելի է փաստել, որ Թովմա պատմիչը ճանաչել է Իսահակ Թավրիզեցուն և նրանից է քաղել տեղեկություն Ստեփաննոս վարդապետի մասին: Հիշյալ եզրահանգման իսկության մասին անուղղակիորեն փաստում է պատմիչի հաղորդած հետևյալ տեղե-

---

[1] Թովման նկատի ունի մահմեդականներին ու Մուհամեդ մարգարեին: Նկարագրվող ժամանակաշրջանում հայ հեղինակները խուսափում էին ուղղակիորեն օգտագործել մահմեդական եզրը և անվանական հիշատակել մարգարեին՝ դիմելով այլաբանական զանազան հնարքների:

[2] **Թովմա Մեծոփեցի**, նշվ. աշխ., էջ 35-36:

կությունը. «/Իսահակը/ եկավ մեզ մոտ՝ Քաջբերունյաց գավառը, Մեծոփա սուրբ ուխտը վեց ամիս...»[1]:

Մկրտությունից հետո սկսվում է Իսահակ Թավրիզեցու ակտիվ քարոզչության և դեգերումների շրջանը, որն ընդգրկում է աշխարհագրորեն մի հսկայական տարածք. «Եւ այնպէս շրջագայեալ ի Քրդստան, ի Պարսկաստան, ի Հայաստան, ի Վրաստան, յԱսորեստան, ի Բաղդատ և այլ բազում տեղիս՝ քարոզութեամբ ածեալ զբազումս ի հաւատս Քրիստոսի՝ զամս քառասուն այնպէս ջանաց և ի նոյն ծերացաւ»[2]: Իսահակ Թավրիզեցին քարոզում էր մահմեդականների, «կռապաշտների», հերձվածողների շրջանում և նրա քարոզչության ողջ ընթացքը տառապանքների ու մարմնական դաժան կտտանքների մի ամբողջ շարք էր: Իր ծննդավայր Թավրիզում, որտեղ նա թմբուկ զարկելով Քրիստոսին էր փառաբանում դաժան չարչարանքների ենթարկվեց, նույնպիսի կտտանքներ սպասում էին նրան Սամարղանդում, Բաղդադում Իսահակին չարչարեցին հերձվածող նեստորականները, Արճեշում քարկոծեցին և տեղի մոլլայի հրամանով հատեցին նրա բազուկը, Լայիլան քաղաքում փորձեցին հրկիզել, Նախիջևանում պարսպից վայր նետեցին, Մաշադում նրան երեք օր ու գիշեր գլխիվայր կախած պահեցին և այլն: Իսահակի քարոզչության վերջին հանգրվանն ու նահատակության վայրը դարձավ Շամախի քաղաքը, որտեղ նա մեծ համբավ էր ձեռք բերել և բազում հետևորդներ ուներ, ինչը մեծ անհանգստություն պատճառեց տեղի իշխանավորներին: Ի վերջո մոլեռանդ ամբոխը Իսահակին բռնությամբ տարավ քաղաքի դատավորի մոտ: Ո՛չ ահաբեկումը, ո՛չ կտտանքները և ոչ էլ մեծամեծ պարգևների խոստումները չխափանեցին Իսահակի հավատն առ Քրիստոս և երբ մահվան դատավճիռ արձակեցին, նա խնդրեց իրեն այրեն.»...ի նշանակ սիրոյն իմոյ, որ վառեալ եմ ի սէրն Քրիստոս»[3]: Այս խոսքերից հետո ամբոխից մոլագար մեկը հաստ բրով ուժգին հարվածում է Իսահակի գլխին և սպանում նրան: Արյան ծարավ ամբոխը ծվատում է Իսահակի մարմինը ու հրկիզում և ինչպես վկայում է հայսմավուրքային պատումի հեղինակը, այդ տեղում հաջորդ օրը լույս ճառագեց: Բոլոր Հայսմավուրքներում հստակ նշվում է Իսահակի նահատակության ճշգրիտ ժամանակը՝ 1417 թ. ապրիլի 18-ին[4]:

---

[1] Նույնը, էջ 37:

[2] Հայոց նոր վկաները, էջ 213:

[3] Նույնը, էջ 215:

[4] Նույնը, էջ 216:

Միրաք Թավրիզեցի

Ի տարբերություն Ավագ Սալմաստեցու և Իսահակ Թավրիզեցու, սուրբ նահատակ Խոջա Միրաք Թավրիզեցու մասին հրապարակում եղած տեղեկություններն ավելի հարուստ են և նրա գործունեությանն ու մարտիրոսության պատմությանն անդրադարձել են շատերը: Սա այն Միրաքն է, ով ըստ Լ. Խաչիկյանի և Աշ. Հովհաննիսյանի, «ամենայն հավանականությամբ, 1469թ. ղեկավարել է Ուզուն-Հասանի կողմից Վենետիկ, ապա և Հռոմ ու Նեապոլ առաքված դեսպանությունը»[1]: Խոջա Միրաքի դեսպանությանն անդրադարձել է նաև Ղևոնդ Ալիշանը[2]: Խոջա Միրաքի հայրը Թավրիզում և ողջ Պարսկաստանում հռչակված և մեծահարուստ արծաթագործ-ակնագործ էր, ով Սկանդարի իշխանության տարիներին ուրացել էր նախնյաց հավատը և մահմեդականություն էր ընդունել: «Չհետևելով հոր օրինակին,- գրում է Աշ. Հովհաննիսյանը,- Միրաքն այնուամենայնիվ կարողացավ հարստության տեր դառնալ և պատիվներ ընդունել Թավրիզի արքունիքից՝ թե՛ Սկանդարի, թե՛ Ջհանշահի և թե՛ Ուզուն Հասանի ժամանակ»[3]: Խոջա Միրաքը բարեպաշտ հավատացյալի և հայ եկեղեցու բարերարի համբավ ուներ: Միրաք Թավրիզեցին քաղաքի Հայ առաքելական համայնքի ավագն էր, մեծ ազդեցություն ուներ սկզբում կարակոյունլուների, այնուհետև նաև ակկոյունլուների արքունիքում և ինչպես նշում է Մաղաքիա արք. Օրմանյանը. «մեծամեծ բարերարութիւններ կկատարէր, բազմաթիւ գերիներ կ'ազատէր, եւ դրամի զօրութեամբ եկեղեցիներու շինութեան եւ քրիստոնէից պաշտպանութեան շնորհներ կստանար...»[4]: Միրաքը օգտագործելով իր դիրքը և մեծ ազդեցությունը մահմեդական իշխանավորների մոտ դարձել էր իրավազուրկ հայ բնակչության շահերի պաշտպանը[5]: Խոջա Միրաքի ե-

---

[1] ԺԵ դարերի հայեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ (1481-1500թթ.), կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, ԳԱ հրատ., Երևան, 1967, էջ 83-ի ծանոթագրություն., **Ա. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1959, էջ 12:

[2] **Ղ. Ալիշան**, Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց և վենետաց, ի ԺԳ-ԺԴ եւ ի ԺԵ-ԺԶ դարս, Վենետիկ, Ս.Ղազար, 1896, էջ 187:

[3] **Ա. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 12:

[4] **Մ. արք. Օրմանյան**, նշվ. աշխ., հ. Բ., սյունակ 2583-2584:

[5] **Ք. Տեր-Դավթյան**, XI-XV դարերի հայ վարքագրությունը, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1980, էջ 103:

ղերական մահվան մասին իր ուղեգրություններում վկայություն է թողել նաև Ջոզեֆա Բարբարոն, ում այդ դեպքի մասին պատմել էր Ջենովացի Պիետրո դի Գուասկոն. «…մի հայ խոջա Միրաք, որ մի հարուստ վաճառական էր բոլոր ապրանքների, գտնվում էր մի ոսկերչի խանութում, ուր եկավ դեպի նա մի սուրբ կոչված Հաջի առաջարկելով նրան ուրանալ Քրիստոսի հավատը և դառնալ մահմեդական, որին նա քաղաքավարիորեն պատասխանեց, խնդրելով, որ իրեն նեղություն չպատճառե, բայց մյուսը շարունակեց պնդել, համառորեն առաջարկելով, որ ուրանա: Նա (**Միրաքը-Ա.Ա**) նորից դրամ ցույց տվավ նրան, բայց հաջին դրամը չէր ուզում, պնդելով, որ նա ուրանա: Որի վրա Խոջա Միրաքը պատասխանեց, թե ինքը չի ուրանում և պիտի պահե իր հավատը, ինչպես արել է մինչև հիմա: Որի վրա այս ստահակը քաշեց սուրը մի ուրիշ մարդու պատյանից և զարկեց այնպես Խոջայի գլխին, որ սպանեց նրան և անմիջապես փախավ»[1]: Խոջա Միրաքի նահատակությունից հետո Գրիգոր վարդապետ Չորթան Արճիշեցին գրել է նրա վարքը[2], որը տեղ չի գտել «Հայոց նոր վկաներ»-ում մի պարզ պատճառով, որ այն հայտնաբերվել է Սեբաստիայում Գ.Փիրղալեմյանի կողմից, չի հրատարակվել և ծանոթ չէր ժողովածուի աշխատասիրողներին:

«Հայոց նոր վկաներ»-ում հրատարակված Միրաք Թավրիզեցու նահատակության հայսմավուրքային պատումը գրված Մովսես գրչի կողմից, նմանություններ ունի վերը բերված Ժոզեֆա Բարբարոյի հիշատակության հետ: Մեհթի անունով մի մոլեռանդ մահմեդական ում Թավրիզի տիրակալ Յաղուբը թույլ էր տվել առանց դատաստանի խլել, զրկել, ծեծել «անհավատներին», գրգռվելով իր ազգակիցների հորդորներից, որոշում է սպանել երանելի այր Միրաքին: Ավագ ուրբաթ օրը (1486 թ. մարտի 24-ին) Մեհթին սուրը կապած գալիս է շուկա և կանգնում Միրաքի խանութի դռանը: Հայսմավուքային պատումի հեղինակը բերում է Մեհթիի և Միրաքի երկխոսությունը. «/Մեհթին/ ասէ. Դարձիր ի Քրիստոսէ և տուր փառք պատգամաբերին[3] մերոյ: Ասէ Միրաք փա՛ռք փառաւորեալ անու-

---

[1] **Հ. Հակոբյան**, Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության. Ուղեգրություններ, հ. Ա., ԺԳ-ԺԶ դար (1253-1582 թթ.), Հրատարակություն Մելքոնյան ֆոնդի, Երևան, 1932, էջ 212-213:

[2] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն երրորդ, էջ 82, Լ. Խաչիկյանի ծանոթագրություն:

[3] Ինչպես և նախորդ վկայի պարագայում, այստեղ ևս Հայսմավուրքում խուսափում են Մուհամեդ մարգարեի անունը տալուց՝ անվանելով նրան պատգամաբեր:

անն Քրիստոսի յամենայն ժամ»[1]: Որքան համառորեն էր Մեհթին պահանջում Միրաքից ուրանալ Քրիստոսին, նույքան անհողդողդ էր Միրաքն իր հավատքում: Ի վերջո Մեհթին կտրում է Միրաքի գլուխը և անցնելով այն իր սրի ծայրին պտտվում է շուկայում ի տես իր հավատակիցների, այնուհետև տանում և Յաղուբի մոր պալատի դռանն է նետում: Ոգևորվելով Մեհթիի այս քայլից մահմեդական խառնամբոխը պաշարում է Թավրիզի հայոց Մայր եկեղեցին, ցանկանալով խորտակել այն: Թավրիզի տիրակալի մայր Բակումը ականջալուր լինելով քաղաքի հայ բնակչության խնդրանքին, անմիջապես լուր է ուղարկում որդուն Մեհթիի չարագործության մասին: Յաղուբն անմիջապես միջոցներ է ձեռք առնում, բռնել է տալիս փախուստի դիմած պիղծ Մեհթիին անձամբ պատժում նրան՝ ձեռքի տակ ընկած աղյուսով ջնջխելով դեմքը, իսկ գլուխն ուղարկում է Միրաքի որդուն: Յաղուբը պատժում նաև իր բարձրաստիճան պալատական Ղասումին, ով հակառակվելով տիրակալի կամքին, փողոցային շների հոշոտմանը նետված Մեհթիի դիակը մոլագար ամբոխի աղաղակների ուղեկցությամբ պատիվներով թաղում է և նրան հռչակում շահիդ՝ նահատակ: Ղասումին խոցել էր այն հանգամանքը, որ Խոջա Միրաքին հուղարկավորել էին մեծամեծ պատիվներով և քրիստոնյաների հոծ բազմության ներկայությամբ, իսկ նրան սպանողի լեշը նետել էին շներին ու թռչուններին որպես կեր: Վերջում Մովսես գրիչը մի շատ հետաքրքիր և դիպուկ դիտարկում է անում. «Եւ արդ՝ ո՞վ եղբայրք, եկայք օրհնեցուք զնախախնամողն Աստուած յամենայն ժամ, զի ոչ թէ Եաղուպ փատշահն առաւել քրիստոնէասէր էր և կամ Հայուն առաւել բարեկամ, քան Տաճկին, այլ զի ճշմարիտ որ սիրտ բռնաւորաց ի ձեռն Աստուծոյ է, զի թէ այն մի քրիստոնէի արեանն փոխան՝ արիւն այն մեծ պարոնին վեց գլխաւոր տաճիկի արեամբ չէր հեղեալ այնպիսի խայտառակ մահուամբ, ***իմա՛ զի ազգս Հայոց ջնջեալ լինէր սրով անօրինացն յամենայն տեղիս*** /ընդգծումը մերն է-Ա.Ա./»[2]:

Միրաք Թավրիզեցու նահատակության մասին մի գողտրիկ բանաստեղծական վկայություն անտեսվել է թե՛ «Հայոց նոր վկաներ»-ի կազմողների և թե նրա մարտիրոսությունը ռուսերեն հրատարակած վաստակաշատ գիտնական Ք.Տեր-Դավթյանի կողմից: Ստորև բերենք այդ վկա-

---

[1] Հայոց նոր վկաները, էջ 324:

[2] Հայոց նոր վկաները, էջ 327:

յությունը, որի հեղինակն է գրիչ Թադեոս /բնագրում Թաթէոս/ աբեղան

Ինն հարուր թվին, երեսուն և հինգ ամին (1486)
Եղաւ խիստ ողորմի բան Թաւրէզ՝ խուճա Միրաքին…
Մեծի ուրբաթի աւուրն նայ գնաց ի մեջ փողոցին,
Դուռն եբաց դուքանին, չէր գտել թէ չար կու խորհին:
Եկին դուռ դուքանին, թէ իման բեր մեր մեծաւորին,
Նայ պատասխան զայն արար՝ հաւատամ զՅիսուս կենդանին:
Այն պէղծն էառ սուրն ու էհատ զգլուխ խուճին…
Ձայն հնչեցաւ քաղաքին, թէ Միրաքն ըսպանեցին…
Խապարն ինկարին տարան, թէ ղազէ քրիստոնէին,
Նայ դուռն փատշահին գնաց ու ասաց զուրանց նորին…
Փատշահն հրաման արար պարունացն, որ դուռն կային,
Գնացէք, բռնեցէք այն պէղծն, կապեցէք ձեռն յետևին:
Բերին դուռն փատշահին, նայ էհարց զարուն Միրաքին,
Նոքա պատասխան չտուին, պապանձեաց լեզուն բերանին:
Նայ դժարեցաւ սրտին, էառ քար էզարկ բերանին,
Հրաման դահիճին արար, եկին զգլուխ հատին…[1]

Գրիգոր Արփայեցի

Գրիգոր Արփայեցու նահատակության միակ վկայությունը պատկանում է Առաքել Դավրիժեցի պատմիչի գրչին: Իր պատմության ԺԴ /14/ գլխում, որը վերնագրված է «Մյուս այն նեղությունների պատմությունը, որ հայ ժողովուրդը քաշեց Շահ Աբաս թագավորի ձեռքից» Դավրիժեցին, ով ականատեսն էր հայերի բռնագաղթի և զրկանքների, համառոտ ներկայացնում է Գրիգորի նահատակության հանգամանքները: Գրիգոր Արփայեցին ի տարբերություն վերը հիշատակված նահատակների ծագումով Վայոց ձորի Արփա (Վարագ Առաքելյանի կարծիքով Արենի) գյուղից էր և Պարսկաստանի Փերիա կամ Փարիա գավառի Ներքին Խոյիկան գյուղում էր հաստատվել Շահ Աբաս Ա-ի ձեռնարկած հայերի զանգվածային բռնագաղթի արդյունքում: Այս պարթևահասակ ու քաջ հայորդին, ով աչքի էր ընկնում բնատուր խելքով շուտով դառնում է Փերիայի գավառի հայության իսկական առաջնորդը՝ ով «Քրիստոսի հավատով ու

[1] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն երրորդ, Գանձարան-Մաշտոց, էջ 80-81:

սիրով հաստատուն ու ջերմ էր»[1]: Փերիա և Բուրվար գավառներում, որտեղ բնակեցվել էին հայրենի երկրից բռնագաղթված հայերը, Շահ Աբասը ծպտյալ շրջագայության ժամանակ նկատել էր, որ նրանք դժգոհ էին իրենց վիճակից և նոր բնակավայրերից, չնայած գաղթից անցել էր շուրջ 15 տարի: Շահը զայրացած հրամայում է զանգվածաբար թլպատել հայերին, հավատափոխությանը համաձայնված քահանաներին քառասուն ոչխար տալ, արգելել նրանց օգտագործել Սուրբ գրքերը, որոնք հետագայում զանգվածաբար հավաքվեցին ու բերվեցին Սպահան: Չգոհանալով դրանով շահը մոլլաներ ուղարկեց հայկական գյուղերը, որոնց հետ սուր բախումներ առաջացան և հայերը սպանեցին դրանցից մի քանիսին, որից հետո մոլլաները փախան Փերիայի և Բուրվարի շրջանների հայկական բնակավայրերից: Այս լարված իրավիճակում ասպարեզ է գալիս Գրիգոր Արփայեցին, ով իր հետ առավ յոթ մարդ հիշյալ գավառներից, եկավ Սպահան, պարտքով մեծ գումար ժողովեց պարսից իշխաններին կաշառելու հաար, որպեսզի նրանք «պատեհ ժամին թագավորի առջև իրենց մասին լավ խոսեն»[2]: Գրիգորին իր համառության շնորհիվ հաջողվում է մի քանի անգամ աղերսագիր ներկայացնել շահին և համոզել նրան կնիքով հրովարտակ գրել, որով թույլ էր տալիս Փերիայի և Բուրվարի գավառների հայերին համարձակորեն պաշտել իրենց քրիստոնեական կրոնը: Գրիգորին հաջողվեց նաև հետ վերադարձնել պարսիկների կողմից գերեվարած Սուրբ գրքերը: Քրիստոսի հավատին և քրիստոնեական կրոնին նախանձախնդիր Գրիգոր Արփայեցու օրավուր աճող հեղինակությունը, ինչպես վկայում է Առաքել պատմիչը, արյունարբու մահմեդականների նախանձն առաջացրեց: Սրանք սպանեցին իրենց հավատակիցներից մեկին և դիակը գցեցին Գրիգորին պատկանող արտը՝ մեղադրելով նրան մահմեդականի սպանության մեջ: Սուտ վկաների ցուցմունքով դատարանի առջև կանգնած Գրիգորին առաջարկեցին կամ ուրանալ սեփական հավատը և մահմեդականություն ընդունել կամ մահապատժի ենթարկվել որպես մարդասպան: Գրիգորն ընտրեց հանուն հավատի նահատակվելու ճանապարհը: «Նրա մասին շա-

---

[1] **Առաքել Դավրիժեցի**,Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Հայ մատենագիրներ շարք, «Սովետական գրող» հրատ. Երևան, 1988, էջ 140:

[2] Նույն տեղում:

տերը վկայեցին, թե տերը փառավորեց նրան երկնքի լույսի երկնային հրաշքներով: Նրան թող Քրիստոսը տա իր խոստացած արքայությունը, իսկ մեզ ևս ընդունի իր սրբերին մասնակից լինելու իր ողորմությամբ. ամե՛ն»,- գրում է առաքել Դավրիժեցին[1]:

Ցավոք Գրիգոր Արփայեցու նահատակության մասին այլ հիշատակություններ չկան, բացի Առաքել Դավրիժեցու վկայությունից: Սա բացատրվում է նաև նրանով, որ XVIIդ. սկսած Հայսմավուրքները, այսպես ասած, չեն թարմացվել, կամ էլ եզակի դեպքերում են դրանցում ավելացվել նոր մարտիրոսների նահատակությունների նկարագրությունները:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ հայ սրբագրական ժանրի հուշարձաններում իրենց հաստատուն տեղն ունեն իրանահայ թեմերը ներկայացնող, հանուն քրիստոնեական հավատի նահատակված և այժմ, այսպես կոչված, «մոռացված սրբերի» շարքին դասվող մարտիրոսները:

Բանալի բառեր. *Սրբեր, մարտիրոսներ, սրբախոսություն, Իրանահայ թեմեր, Ավագ Սալմաստեցի, Իսահակ Թավրիզեցի, Միրաք Թավրիզեցի, Գրիգոր Արփայեցի*

«ЗАБЫТЫЕ СВЯТЫЕ» АРМЯНСКИХ ЕПАРХИЙ ИРАНА (АВАГ САЛМАСТЕЦИ, ИСААК ТАВРИЗЕЦИ, МИРАК ТАВРИЗЕЦИ, ГРИГОР АРПАЕЦИ)

Арман Андрикян

Клюевые слова: *Святые мученики, агиография, мартирология, Армянские епархии Ирана, Аваг Салмастеци, Исаак Тавризеци, Мирак Тавризеци, Григор Арпаеци.*

В статье сделана попытка представить деяния четырех так называемых «забытых святых» принявших мученическую смерть во имя христианской веры живших в XIV-XVIвв.. Представители Армянских епархий Ирана Аваг Салмастеци, Исаак Тавризеци, Мирак Тавризеци, Григор Арпаеци причислены к ряду тех святых чьи праздники или забыты, или вообще не праздновались. Жития и мученичества этих святых взяты из разных первоисточников и по мере возможности сопоставлены методом сравнительного анализа.

---

[1] Նույն տեղում, էջ 141:

THE "FORGOTTEN SAINTS" OF THE ARMENIAN DIOCESES OF IRAN (AVAG SALMASTETSI. ISAHAK TAVRIZETSI. MIRAK TAVRIZETSI. GRIGOR ARPAYETSI)

Arman Andrikyan

Key words. *Saints, Holy Martyrs, Ethics, Testimony, Dioceses of the Armenian Apostolic Church in Iran, Avag Salmastetsi. Isahak Tavrizetsi. Mirak Tavrizetsi. Grigor Arpayetsi*

The article attempts to present the XIV-XVII centuries. the activities of four so-called "forgotten saints" who were martyred for the Christian faith. Avag Salmastetsi, Isahak Tavrizetsi, Mirak Tavrizetsi, Grigor Arpayetsi, representing the Iranian-Armenian dioceses, are among the saints whose holidays are either interrupted or never celebrated. The behavior of the mentioned holy martyrs and the testimony was taken from different sources, the data were compiled and made as complete as possible.